



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

4 հուլիսի 2019 թվականի թիվ 76-Ա

ք. Երևան

«ԱՐՏԳԱՐ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՍԱԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով 2019 թվականի հունիսի 24-ին հարուցված թիվ 15 վարչական վարույթի նյութերը՝ *պարզեց*.

Հանձնաժողովի կողմից «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով վերապահված իր լիազորություններն իրականացնելիս արձանագրվել է «ԱՐՏԳԱՐ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից հեռարձակված հաղորդումների տեսագրությունները և ձայնագրությունները՝ հեռարձակման օրվանից սկսած մեկ ամիս ժամանակով չպահպանելու խախտում:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով՝ 2019 թվականի հունիսի 24-ին Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ:

Հարկ է նշել, որ Հանձնաժողովն իր վերահսկողական գործառնություններն իրականացնելիս Ընկերության կողմից 2019 թվականի ապրիլի 1-ից ապրիլի 15-ն ընկած ժամանակահատվածում հեռարձակված եթերի ձայնագրությունները չներկայացնելու հիմքով Ընկերության նկատմամբ իրակացրել է վարչական ևս մեկ վարույթ: Նշված վարչական վարույթի շրջանակներում Ընկերությունը 2019 թվականի հունիսի 4-ին Հանձնաժողով ներկայացված դիմումով պարտավորվել էր մինչև վարչական վարույթի քննարկման օրը, ներկայացնել Հանձնաժողովի կողմից պահանջված ձայնագրությունները:

Սակայն, Ընկերությունը՝ լինելով պատշաճ ծանուցված, Հանձնաժողովի նիստին չէր մասնակցել և պահանջված ձայնագրությունները չէր ներկայացրել:

Ընկերության կողմից 2019 թվականի ապրիլի 1-ից ապրիլի 15-ն ընկած ժամանակահատվածում հեռարձակված եթերի ձայնագրությունները չներկայացնելու հիմքով Հանձնաժողովի 2019 թվականի հունիսի 14-ի թիվ 62-Ա որոշմամբ Ընկերության նկատմամբ կիրառվել է վարչական տույժ՝ գրավոր նախազգուշացում:

Վերը նշված վարչական տույժը կիրառելուց հետո Ընկերության կողմից ներկայացվել է հեռարձակված եթերի ձայնագրությունները՝ Seagate S/N: 5JX9YW4P մակնիշի կոշտ սկավառակով:

Սակայն, Հանձնաժողովի մասնագետների կողմից կատարած ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ տվյալ սկավառակը չի կարող հանդիսանալ ապացույց Ընկերության եթերի ձայնագրությունների պահպանման վերաբերյալ:

Փաստորեն, Ընկերության կողմից չեն պահպանվել իր հեռարձակված հաղորդումների տեսագրություններն ու ձայնագրությունները՝ հեռարձակման օրվանից սկսած մեկ ամիս ժամկետով, այդպիսով խախտելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջը:

Հանձնաժողովը 2019 թվականի հունիսի 24-ին հարուցել է սույն վարչական վարույթը՝ հեռարձակված եթերի ձայնագրությունները չպահպանելու հիմքով և պատշաճ ծանուցելով Ընկերությանը հայտնել է, որ ներկայացված սկավառակը չի հանդիսանում ապացույց Ընկերության եթերի ձայնագրությունների պահպանման վերաբերյալ և այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել պարզաբանումներ և բացատրություններ:

Հարուցված վարչական վարույթի ընթացքում Ընկերության կողմից պարզաբանումներ և բացատրություններ չեն ներկայացվել Հանձնաժողով:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ հեռուստառադիոընկերությունները պարտավոր են պահպանել իրենց հեռարձակված հաղորդումների տեսագրություններն ու ձայնագրությունները՝ հեռարձակման օրվանից սկսած մեկ ամիս ժամկետով:

Հաղորդումները գրանցվում են հաշվառման մատյանում՝ պարտադիր նշելով հեռարձակման ամիսը, ամսաթիվը, հաղորդման սկզբի և ավարտի ժամը, համառոտ բովանդակությունը, հեռուստառադիոհաղորդման հեղինակների և հեռարձակողի անունը:

Հեռուստառադիոընկերությունները հեռուստառադիոհաղորդումների հաշվառման մատյանի տվյալները ներկայացնում են Հանձնաժողով: Հեռուստառադիոհաղորդումների հաշվառման մատյանում հաշվառման կարգը սահմանում է Հանձնաժողովը:

Հեռուստառադիոհաղորդումների հաշվառման տվյալների հիման վրա Հանձնաժողովը վերահսկում է հեռուստառադիոընկերությունների գործունեության

համապատասխանությունը օրենսդրության և լիցենզիայի պայմաններին: Հանձնաժողովը ընտրանքային սկզբունքով իրականացնում է հեռուստառադիոընկերությունների կողմից հեռարձակվող ծրագրերի ուղղակի դիտարկումներ յուրաքանչյուր հեռուստառադիոընկերության համար ամսվա ընթացքում առնվազն հինգ օր: Դիտարկման արդյունքները համադրվում են հեռուստառադիոընկերությունների ներկայացրած հաշվառման մատյանների տվյալների հետ:

Հեռուստառադիոհաղորդումների հաշվառման վերաբերյալ գրանցումները կարող են կատարվել նաև էլեկտրոնային տարբերակով:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը՝

12) հեռուստառադիոհաղորդումների տեսագրությունների և ձայնագրությունների ընտրանքային դիտարկման միջոցով պարզում է դրանց համապատասխանությունը օրենսդրության և լիցենզիայի պահանջներին:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդվածի համաձայն՝ հեռուստատեսության և ռադիոյի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների, լիցենզիայի պայմանների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում հեռուստատեսության և ռադիոյի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտումների կրկնակի դեպքեր հայտնաբերելու և դրանց մասին Հանձնաժողովին գրավոր տեղեկացնելու դեպքում Հանձնաժողովն իր որոշմամբ իրավասու է կիրառելու գրավոր նախազգուշացում կամ տուգանք:

Իսկ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածը սահմանում է.

«1. Սույն օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով հայտնաբերված խախտումների առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենքով, Հանձնաժողովն իրավախախտումը հայտնաբերելու օրվանից և (կամ) պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում հայտնաբերված իրավախախտումների կրկնակի դեպքերի մասին տեղեկացվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում գրավոր նախազգուշացնում է խախտում կատարած հեռուստառադիոընկերությանը՝ պահանջելով վերացնել խախտումը և սահմանելով խախտումը վերացնելու համար ողջամիտ ժամկետ:»

Հանձնաժողովն ամրագրում է, որ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ հեռուստառադիոընկերությունները պարտավոր են պահպանել իրենց հեռարձակած հաղորդումների տեսագրություններն ու ձայնագրությունները՝ հեռարձակման օրվանից սկսած մեկ ամիս ժամկետով և ուսումնասիրելով վարչական վարույթի նյութերը՝ ուսումնասիրության արդյունքում արձանագրում է, որ Ընկերության կողմից չեն պահպանվել իր հեռարձակած հաղորդումների տեսագրությունները և ձայնագրությունները՝ հեռարձակման օրվանից սկսած մեկ ամիս ժամանակով, դրանով իսկ խախտելով օրենքի պահանջը:

Նշված արարքը համապատասխանում է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 9-րդ մասի հատկանիշներին:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 9-րդ մասը սահմանում է. «9. Հեռուստառադիոընկերության կողմից իր հեռարձակած հաղորդումների տեսագրությունները և ձայնագրությունները՝ հեռարձակման օրվանից սկսած մեկ ամիս ժամանակով չպահպանելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:»

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, 58-րդ հոդվածի 1-ին մասով և 60-րդ հոդվածի 9-րդ մասով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց**.

1. «ԱՐՏԳԱՐ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառել «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված տույժը՝ տուգանելով սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ԱՐՏԳԱՐ» ՍՊ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

4 հուլիսի 2019թ.

ք. Երևան